ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ ԹԻՎ 56-Ա, 58-Ա, 60-Ա ԵՎ 61-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 56-Ա որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 1 հավելվածն անհրաժեշտ է համարակալել: Բացի այդ, հավելվածում առկա են կրճատ գրառված բառեր: Համաձայն □Նորմատիվ իրավական ակտերի□ մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Թիվ 1 հավելվածում «Տեղական տուրքեր» տողի «Կատարողականը աճողական տեսքով (հազ. դրամ)» և «Կատարողական (%)» սյուներում նշված «761.8» և «94.2» թվերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «749.8» և «92.7» թվերով, իսկ «Գույքի վարձակալությունից եկամուտներ» տողի «Կատարողականը աճողական տեսքով (հազ. դրամ)» և «Կատարողական (%)» սյուներում նշված «7415.1» և «156.2» թվերը՝ «7350.4» և «154.8» թվերով:

Բացի այդ, նշված հավելվածում «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ» տողի «III-րդ եռամսյակի պլան (հազ. դրամ)» սյունակում անհրաժեշտ է լրացնել «5250.0» թիվը, «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ» տողից հետո անհրաժեշտ է ավելացնել նոր՝ «Ընթացիկ պաշտոնական դրամաշնորհներ» տող, իսկ «Կատարողականը աճողական տեսքով (հազ. դրամ)» սյունակում լրացնել «1297.5» թիվը:

Բացի այդ, «Ընդամենը» տողի «III-րդ եռամսյակի պլան (հազ. դրամ)», «Կատարողականը աճողական տեսքով (հազ. դրամ)» և «Կատարողական (%)» սյուներում նշված «126627.5», «120388.2» և «95.1» թվերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «131877.5, «121609.0» և «92.2» թվերով:

Թիվ 56-Ա որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածի «Ըստ գործառնական դասակարգման» ծախսային բաժնում «10.2.1. Ծերություն» տողի «Փաստացին աճողական տեսքով (հազ. դրամ)» սյունակում նշված «55.0» թիվն անհրաժեշտ է փոխարինել «39.0» թվով, իսկ «Ընդամենը» տողի «Փաստացին աճողական տեսքով (հազ. դրամ)» սյունակում նշված «106068.2» թիվը փոխարինել «106052.2» թվով:

Որոշմամբ ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի

ծախսերի կատարողականի՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսային բաժնի գումարային ցուցանիշները չեն համապատասխանում 2020 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված «CLIENT-TREASURY» գանձապետական համակարգից ներբեռնված «Ամասիա համայնքի բյուջեի ծախսերի (ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարման վերաբերյալ (02/01/2020-01/10/2020թ ժամանակահատվածի դրությամբ)» տեղեկատվության գումարային ցուցանիշներին:

Թիվ 58-Ա որոշման նախաբանում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածներին կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի:

Բացի այդ, որոշման մեջ նշված չէ տեղեկատվություն գույքի սեփականատիրոջ վերաբերյալ: Որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջին:

Թիվ 60-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթին:

Թիվ 61-Ա որոշման նախաբանում □1-րդ մասի 42 կետի □ բառերն անհրաժեշտ է փոխարինել □1-ին մասի 42-րդ կետի □ բառերով:

Բացի այդ, որոշման մեջ նշված չէ, թե համայնքի բյուջեի ծախսային մասերի որ հոդվածից կամ բաժնից է համապատասխան հատկացումը կատարվել:

Կատարող՝ Շ.Շաքարյան
02.11.2020թ.